

Վազգեն Գ. Համբարձումյան

Բանասիր. գիտ. դոկտոր

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԿԵԼՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ՀՆԶՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Ձայնավորական, ձայնորդային և «երկինջյունային» մակարդակ)*

Բանալի բառեր - հայերեն, կելտական լեզուներ, զուգաբանական քննություն, հնչյունական զուգաբանություն, ձայնավորների, ձայնորդների և երկինջյունների զուգաբանություն, զուգաբանական օրինաչափություն, զուգաբանական մասնակիություն (յուրահատկություն):

1. Հարցի ընդհանուր դրվածքը

1. 1. Հնդեվրոպական քաղաքակրթություն կրող ժողովուրդներից են կելտերը, որոնց լեզուներից առավել հայտնի են իռլանդերենը, շոտլանդերենը, բրետոներենը, մեներենը և այլն: Հայերենը և կելտական լեզուները, իբրև ընդհանուր հնդեվրոպական ժառանգություն, ունեն ծագումնային և տիպաբանական ակնհայտ ընդհանրություններ (զուգադիպումներ):

1. 2. Մեր այս աշխատանքը նվիրված է հնչյունական այն առնչություններին, որոնք ներկայանում են իբրև ձայնավորական, ձայնորդային և երկբարբառային («երկինջյունային») զուգաբանություններ (*իզոգլոսներ*. անգլ. isoglosses):

Հայերենի համեմատական ուսումնասիրությունը վերջին մի քանի տասնամյակում շրջադարձային փուլ է մտել: Առավել մեծ կարևորություն է տրվում հնդեվրոպական հիմք-լեզվի վերականգնման և գնահատման մեջ հայերենի հնավանդ (արխաիկ) տվյալներին: Այդ տվյալներն առավել կարևոր են իրենց մանրամասնությամբ, քանի որ ներկայումս լեզվաբանությունը հենվում է եղած փաստերի վրա: Այս խնդրի լուծման մեջ կարևոր է ցեղակից լեզուների ոչ միայն ընդհանուր, այլև առանձին, միջանկյալ համեմատությունների անցկացումը: **Սույն աշխատանքը հայ-կել-**

ՎԷՆ ԿԵԼՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԲՈՒԿՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ, 2019

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.11.2019:

տական հնչյունական առնչությունների հատուկ ուսումնասիրությանը նվիրված առաջին փորձն է համեմատական-տիպաբանական լեզվաբանության մեջ:

1.3. Հայ-կելտական հնչյունական զուգաբանություններն այստեղ առանձնացվում են ամենից առաջ Հ. Աճառյանի «Արմատական բառարանի» նյութի հիման վրա գրված «Հայոց լեզվի պատմության» և «Լիակատար քերականության» (հատ. VI, էջ 463-516) մեջ կատարված փաստական նյութի վերլուծության նկատառումով, որի տեսական հիմքը Ա. Մեյեի հայտնի ուսումնասիրության (Introduction à l'étude comparative des langues indoeuropéennes, Paris, 1903) դրույթներն են, և դա շարունակվում է նաև հետագայում:

Մասամբ նկատի ենք ունեցել նաև այլ աշխատությունների տվյալները, որոնք փորձել ենք համապատասխանեցնել եղածին՝ ավանդականին: Զուգաբանությունների ընդհանուր (հնչյունական, բառային) ցանկի ավելի ուշ կատարված լրացումները (Գ. Զահուկյանի և ուրիշների), կարելի է ասել, չեն փոխում իրերի բուն դրվածքը¹:

Զուներք նման զուգաբանություններին նվիրված առանձին աշխատանք. կան կողմնակի դիտարկումներ՝ հնդեվրոպաբանության այս կամ այն թեմայի առնչությամբ:

1. 4. Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ (I մաս, էջ 24-28), հետևությամբ Ա. Մեյեի, ցեղակից լեզուների համար առանձնացվող մեկ տասնյակից ավելի (թվով՝ 16) բնութագրիչ «զուգակցություններից» (իմա՝ զուգաբանություններից – Վ. Հ.) 7-ը (հմր. 2-8) վերաբերում են հնչյունականին, ընդ որում, դրանցից միայն 2-ում կա առնչություն հայերենի և կելտական լեզուների միջև (հե. *o, *a ձայնավորների և *bh, *dh, *gh շնչեղ ձայնեղների՝ ձայնեղի վերածվելու վերաբերյալ. հե. *t հնչակապակցումը հայերենում «մնում է անհայտ», կելտականում վերածվում ss-i)²: «Լիակատար քերականության» մեջ (հատ. 6, էջ 463-516) վերլուծությունը կատարվում է ոչ միայն հնչյունական առնչությունների («օրինաչափությունների») ընդհանուր սահմանումով, այլև մասնավոր դեպքերի (ընդհանուր կանոններից շեղումների՝ «դիտողությունների») մատնանշումով, որոնց հետևում են համապատասխան ցանկերը («օրինակները»՝ գրեթե սպառիչ), ինչպես նաև համեմատվող լեզուներում հնչյունական անցումների աղյուսակի («համադրական տախտակի») կազմումով: Նման մանրամասն աշխատանքը, ինչ խոսք, ամբողջական լինելով

1 Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հատ. 1-4, Եր., 1971-1979: Նույնի Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., 1940, էջ 23-99: Նույնի Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. VI, Եր., 1971, էջ 463-590: Հմնտ. Meïe A., Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1933, էջ 109-49: A Concise comparative Celtic Grammar by H. Lewis and H. Pedersen, Göttingen, 937 (= ռուս. թարգմ. Льюис Г. и Педерсен Х., Краткая сравнительная грамматика кельтских языков, М., 1954, էջ 25-198) և այլն:

2 Հմնտ. Meillet A., Les dialectes indo-européens, P., 1908: Meïe A., նշվ. աշխ., էջ 418-423:

հանդերձ, ունի որոշ լրացումների և տարբեր օրինակների մատնանշամբ ճշգրտումների կարիք, հատկապես՝ հայ-կելտական առնչությունների դեպքում:

Միաժամանակ զուգաբանությունների ավելի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ ավանդաբար նշվող ընդհանուր կանոնների (զուգաբանական անցումների) կողքին կան զգալի թվով, ընդ որում՝ տարբեր բնույթի բացառություններ, որոնք մասնակիորեն սահմանելի են կամ էլ պարզապես մատնանշելի:

1. 5. Հայ-կելտական հնչյունական զուգաբանությունները հիմնականում բերում ենք ըստ այդմ, կատարում մասնակի ճշգրտումներ և լրացումներ, որքան հնարավոր է նյութի ավելի մանրամասն քննության դեպքում: Դասական համեմատաբանության մեջ առանձնացվող օրինակների մեծ մասը թերևս վերաբերում է ընդհանուր կանոնների, սակայն կան նաև զգալի թվով բացառություններ, որոնք ոչ այլ ինչ են, քան, կարելի է ասել, շեղումներ այդ ընդհանուր կանոններից:

2. Զուգաբանություններ ձայնավոր հնչյունների համակարգում

Համակարգն ընդգրկում է ինչպես պարզ («կարճ»), այնպես էլ բաղադրյալ («երկար») ձայնավորները, որոնք իրենց հերթին կազմում են ենթահամակարգեր: Ընդ որում, առաջին կարգի ձայնավորներին վերաբերող զուգաբանությունները քանակապես ավելին են, օրինակներով բազմազան, քան մյուսներինը:

2.1. Պարզ («կարճ») ձայնավորների ենթահամակարգ

ա) Հայ. ա – կելտ. a (< հե. *a). օր. աղ (աղծ, աղլր) – իռլ. salann «աղ», վալլ. halen (*sāl-), արոր (*արար) – հիռլ. airim «վարել», միռլ. arathar «գութան, արոր», վալլ. aradr, հկռոն. aradar (*Har-H-t^[h]ro-m), արլթուր (*արլթալթար) – բրետ. dacrou (*drak’ru), ամ (ամիկ) «տարի» – կելտ. sam (*sama), պալ «ժայռ» – կելտ. ad-bal (*bal, bāl), մայր – կելտ. máthar (*māter) և այլն³:

Սակայն նկատում ենք շեղում. կելտականում e (կամ i, u). օր. աղկաղկ – կելտ. elc (*alg), ամբողջ – կելտ. ime (*ambhō), մորուք (*մարուք) – հիռլ. smeck (*smek^[h]-r-/smek^[h]-r-), մածնուկ – բրետ. meza (*mag), հացի – կելտ. huinntus (*ask’hio) և այլն:

բ) Հայ. ե – կելտ. e (< հե. *e). սովորաբար հանդես է գալիս բառի բոլոր դիրքերում. օր. սսեղն – բրետ. ebil (*ak’ln), բերան – կելտ. bern (*bher-am), բերել – կելտ. berim (*bher-), ելանել – գալլ. el (*el-), չորք – հիռլ. ceth(a)ir, (իգ. u.) cethéoir «չորս» (*k^[h]oet^[h]ue/or), պեղել – կելտ. belach (*bel), վեր (վերայ) – գալլ. ver (*uper), տեղ (եպղ) – գալլ. sedlon (*sedlo) և այլն:

3 Քանի որ զուգաբանություններն առանձնացվում են ըստ Հ. Աճառյանի ցանկերի, ուստի հիմնականում պահպանվում է բառ(արմատ)ների նույն տառադարձությունը:

Սակայն կա շեղում ընդհանուր կանոնից. կելտականում *a*, *ei*, *i*. օր.՝ *դեղ* – միռլ. *deil* (**dhel*), *եմ* – կելտ. *am* (**ésmi*), *ցելու* (*ցեղ*) – կելտ. *scailt* (**sk'el*), *քերել* (*քորել*) – կելտ. *scaraim* [**(s)qer*], *քերթել* (*քերծել*) – կելտ. *scrissid* [**(s)qer*] և այլն: Այդպես նաև կան հայերենում, կան կելտականում. *մեջ* – կելտ. *medón* (**mēdyo*), *ծմեռն* – կելտ. *gam* (**g'heiem-er*) և այլն⁴:

Մասնակի երևույթ է ռնգայինից առաջ **e*-ի դիմաց հայերենում *h*, իսկ կելտակա- նում *u* կամ *i*, օր.՝ *h* (նխ.) – կելտ. *in* [**in* (*en*)], *կին* – հիռլ. *ben*, *bé*, (*սեռ. h.*) *mná* «կին», վալլ. *ben-yw* «կանացի, կնոջ» (**k'oen*), *հինգ* – հիռլ. *cóic*, բրետ. *pemp* «հինգ» (**p^[h]enk^{[h]o}e*), *պինդ* – կելտ. *binda* (**bhendh-*) և այլն⁵:

զ) Հայ. *n* – կելտ. *o* (< հե. **o*). սովորաբար հանդես է գալիս բառասկզբում և բառամիջում. օր.՝ *որբ* – կելտ. *osbe* (**orbho*), *ույթ* – հիռլ. *ochtn-* [**ou^[h]t^[h]ō(u)*], *պրկել* – կելտ. *lomm* (**lob*), *տրկալ* – կելտ. *doe* (**dowə-ko*) և այլն, իսկ բառավերջում կելտա- կանն ունենում է նաև *e*, օր.՝ *n*, *ով* – կելտ. *co-te* (**k^ho-*), *սա*, *տյն* – կելտ. *ce* (**k'ō-*):

Այսուհանդերձ նկատում ենք նաև շեղում ընդհանուր կանոնից. կելտականում *u*, *a* կամ այլ ձայնավոր հնչյուն. օր.՝ *ործ* – միռլ. *uirgge* «(ամ)ործիներ» (**orǵ^[h]i*), *ողորմ* – կելտ. *arman* (**orm*), *աղբապ* – կելտ. *liach* (**oliqo*), *ազանիլ* – հիռլ. *fuan* (< *upo-ou-no-* *Pok.*, 1959, 346) (**ues-*) և այլն:

Այս կետում, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, Աճառյանը, օրինակ, ունի մի քանի «դիտողություն»: Հատկապես հայ-կելտական առնչության առումով ուշագ- րավ է այն, որ 1) «նախալեզվի *o* ձայնավորից հետո գրված *p*-ն, դառնալով *z*, նա- խորդ *o*-ի հետ կազմում է *nz*», իսկ կելտականում մնում է նույնը կամ փոխվում. հմմտ. հայ. *ույթ* – կելտ. *och* [**ok'ito* (< **opto*)], *քուն* – կելտ. *súan* (**swopno*), մեկ-երկու բացա- ռությամբ՝ *ան* «ինչք, ունեցվածք» – կելտ. *ān e* (**opnos*), *որով(այն)* – կելտ. *crī* (**qrop-*), 2) ըստ Հյուբշմանի՝ «*o* դառնում է *ni*, երբ ռնգականից հետո ... կա նաև առանց բա- դաձայնի», սակայն բերվող օրինակում կելտականը, ի տարբերություն սահմանվող կանոնի, ունի *i* ձայնավոր հնչյուն. *սուն* (*սնանիլ* և այլն) – կելտ. *sine* (**pson*)⁶:

Աճառյանը միաժամանակ գտնում է, որ, ի լրացումն Մեյեի և Պեդերսենի դի- տարկումների (իմա՝ **o*-ն հայերենում նախահունչ դիրքում «երբեմն մնում է *o* (*n*), երբեմն էլ դառնում է *u*»), հարցը ժամանակին ավելի մանրամասն քննության է ենթարկել Մ. Գրամոնը, որը սահմանել է հետևյալ կետերը, որոնց էլ անդրադառ- նում ենք հայ-կելտական առնչության առումով. 1)**o*-ն հայերենում բառասկզբում կամ առանձին վանկ կազմելիս դառնում է *u*, իսկ կելտականում (ավելացնենք) *u*, *e*, *ai*. *հացի* – կելտ. *huinnius* (**ask'hio*), *անէծք* – կելտ. *sned* (**neid*), *պրամն* – կելտ.

4 Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. VI, էջ 464-468:

5 Կելտական լեզուներում ոչ թե հունարենի և հայերենի, այլ մյուս լեզուների նման չկա նախահավելվածային ձայ- նավոր տարրի գործածություն:

6 Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. VI, էջ 171:

dēt (*d̥g-mn), ainm (*nōm̥), 2) *o-ն, որը հայերենում «բառասկզբում և բաղաձայնի հետ վանկ է կազմում, մնում է ո», իսկ կելտականում (ավելացնենք) դառնում է ui, e. (ամ)ործի(ք) – կելտ. uirgge (*orgʰhi), որդի – կելտ. erthyl (*portiyo), 3) հայերենում եթե «երկրորդ վանկում գտնվում է ո, առաջին վանկում էլ լինում է ո», իսկ կելտականում (նկատենք) ոչ միշտ է այդպես, կարող են լինել նաև e, a. որդր – կելտ. arman (*orm), ոլոք (ոլոգ) – կելտ. less (*oleq), որդրկ – կելտ. lorg (*lorgʰ) և այլն, 4) հայերենում նախահունչ շեշտված ո-ն չի փոխվում, իսկ կելտականում դառնում է a, u. ոսկր – կոռն. ascorn (*ostw-er), որձ – կելտ. uirgge (*orgʰhi)⁷:

դ) Հայ. ա – կելտ. a (< հե. *a). սովորաբար հանդես է գալիս բառամիջում. օր. բալ «Վշուշ» – կելտ. ball (*bhal, bhal), հայր – հիդլ. athir (*p^[h]ət^[h]er), յարակ – կելտ. in-ad (*pəd), ջանք – կիմր. iās [*yǝ-(i)], ցախ – կիմր. cainc (*skʷ-kho) և այլն⁸:

Կան բացառություններ հիշյալ ընդհանուր կանոնից. կելտականում o, e, w, aw. օր. գան «ծեծ» – հիդլ. gonim «սպանել» (անց. կտր. 3-րդ դ. geguin), guin «վերք» (*g^[h]en), դալ «կաթնախեց» – հիդլ. debaid «ծծում է», հիդլ. dīnu «(կաթնակեր) գառ», միդլ. delech «(կթու) կով, (բրբռ.) կթան», միդլ. del «ծծիչ» (*d^[h]eH(i)-), թարախ (?) – կիմր. trwnc (*tǝr-), մանր (մանուկ) – կելտ. menb (*mǝnu), նայ – կելտ. snaudh (*snǝ-t) և այլն:

ե) Հայ. ա – կելտ. e (< հե. *o): Այս կրճատ («ամփոփ») ձայնավորի որակական գնահատությունը տալիս է Մեյեն. «Որոշ համապատասխանություններ կարծես ստիպում են ենթադրել *a-ի հետ այլ կրճատ ձայնավոր՝ մեր կողմից *o նշանակումով, որը կարող էր հերթագայվել *e-ի, *o-ի հետ, և որը լատիներենում և հայերենում հանդես է գալիս որպես ա, հունարենում i, գերմաներենում՝ u»⁹: Հմմտ. մարի «(էգ) թռչուն» – կիմր. mereh (*m^ori):

2. 2. Բաղադրյալ («երկար») ձայնավորների ենթահամակարգ

ա) Հայ. ա – կելտ. ā (*ā). հանդես է գալիս բառի բոլոր դիրքերում, մանավանդ՝ բառամիջում, ինչպես նաև ձևաբանական կազմում (բացառիկ օրինակով). օր. աղ (աղյր, աղծ) – կելտ. salann (*sal-), այրել (զայրանալ) – կելտ. āith (*ātei), եղբայր – կելտ. bráthir (*bhrāter), դա – կելտ. -d (*tā), թանալ – կելտ. tām (*tā, tām), մայր – հիդլ. māthir (*māter), նաւ – կելտ. nau (*nāu), տանուկ – կելտ. dān (*dā-mo- + ուկ), ծիծառն – կելտ. gairm (*gār), յագենալ – կելտ. sāith (*siw), սրանալ – կելտ. cono-snaim (*stá- + ն) և այլն:

7 St'iu նույն տեղում, էջ 471-472: Հմմտ. Grammon M., Notes de phonétique générale. VI. Aménien classique, “Mémoire de la Société de linguistique de Paris”. 20, 2018:

8 Խնթերենի տվյալները ցույց տվեցին, որ հե. *a-ն ունի ձայնորդի, քան ձայնավորի արժեք, համարժեք խեթ. ի-ին (տես Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Խատ. VI, էջ 477):

9 Meise A., նշվ. աշխ., էջ 126-127:

Կան զգալի թվով բացառություններ հիշյալ ընդհանուր կանոնից. կելտականում eu, a, au, ū, ē, i. օր.՝ երկան՝ – կիմր. breuan (*g²rāwana), լայն – կելտ. lethan (*plātno), մասրն – կիմր. maut (*māt), պրաս՝ «պինդ» – հիոլ. dron «ամուր», կիմր. dūr (*t'e/oru-, *t're/ou-), լալ «լաց լինել» – միոլ. lēn (*plā), կեալ – կելտ. biu (*g²iya) և այլն: Բացառությունները, հավանաբար, տարբեր լեզուներում առկա բարբառային տարբերություններ են:

բ) Հայ. *ի* – կելտ. *ē* կամ *ī* (*ē). հե. երկար *ē ձայնավորը, ի տարբերություն նախորդի՝ երկար *ā ձայնավորի, որը կելտականում և առհասարակ ցեղակից մյուս լեզուներում հարաբերակցվում էր միայն մեկ ձայնավորի հետ, այստեղ, ընդհանուր կանոնի համաձայն, արտացոլված է իբրև երկար *ē (անշեշտ) կամ *ī* (շեշտված) ձայնավոր. օր.՝ *դնել* (**դինել. ըն-տիր*) – գալլ. dede (*dhē), *սիրտ* – կելտ. cīde (*k'erdī), *լի* (*լնուլ*) (<*p^[h]leH-ɪo-s) – հիոլ. lán «լեցուն, լի», կելտ. līnaim (*p^[h]līH-(no)-«լի, լեցուն»), *լիլ* «հալել» – կելտ. legaim (*lēg), *միտք* – կելտ. mīdiur (*mēd), *լիլ* – կելտ. līa (*plē), *ստիկն* – կելտ. sīne (*pstēn) և այլն¹⁰:

Այս ընդհանուր կանոնից, որ սահման է հաստատում գալլերենի և կելտական մյուս լեզուների միջև, թերևս գրական, քան բարբառային լեզվի աստիճանի վրա գտնվող հարաբերակցություն է, այնուամենայնիվ նկատելի է նաև շեղում. կելտականում a, ū, o, երկբարբառային ao, ei և այլն. օր.՝ *գիլ* (*գլ-որ*) – կիմր. olwyn (*wēl), *թրիք* (?) («խոշոր եղջերավորների» թորանք) – բրետ. stroñk (*tēr-), *ծին* – կելտ. gein (*g'ēn), *մի*՝ (արգելական) – կելտ. samail (*mē), *ծիր* – կելտ. gor (*g'hēr), *տիղմ* (*տիլ*) – բրետ. ataot (*stēl), *ցիլ* // *քիլ* – կելտ. cūil (*sk'ēwo):

գ) Հայ. *ու* – կելտ. *ū* (անշեշտ) կամ *ā* (շեշտված) (*ō): Հե. *ō ձայնավորը ևս կելտականում, ինչպես նաև լիտվերենում [ū (անշեշտ) կամ *ā* (շեշտված). հմմտ. dūti «տուրք» < հե. *dō-ro-, հայ. *տուրք*, հուն. δῶρον «տուրք», վալլ. dawn (նույնը) և այլն¹¹], իբրև ընդհանուր կանոն, զուգահեռ է ցեղակից մյուս լեզուների մեկ կամ մյուս ձայնավորին. *կռունկ* – կիմր. garan (*gurōng), *սուր* (*սլուլ*) – կելտ. cath (*k'ō-ro), *անուն* – կելտ. anim (*nōmŋ), *թուր* – կելտ. tarathar (*tō):

Այս դեպքում ևս նկատելի են շեղումներ ընդհանուր կանոնից. կելտականում o. օր.՝ *բլուր* (**բուլ-ուր*) – կելտ. bolach (*bhōl), *դուրզն* – կելտ. droch (*dhrōgh), *թրթուր* (**թուր-թուր*) – բրետ. kontron (*tōr), *հում* – կելտ. om (*ōmo), *ուղուկ* (*ուլն* «վիզ», *ուլուլալ* «լալ, լաց լինել») – կիմր. elin (*ōl, ōlen)¹², *ուրել* – կիմր. esu (*ōd), *ուրուր* (*ուր-ուր*) – կելտ. irar (*ōr), *մամուլ*, *մլաղաց* (< *մլ-աղաց*) – կելտ. melim (*mōl), *պրպունջ* – կելտ. dord (*dōrd), *շուն* – կելտ. cú, նաև con (տվյալ դեպքում երկրորդը) (*k'won):

10 Տե՛ս նույն տեղում, էջ 127:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 127: **Զահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1987, էջ 119:

12 Բառը չկա Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» գրքի ցանկում. այն գտնում ենք հեղինակի «Լիակատար քերականության» մեջ բերվող օրինակներում:

Ուստի ծայնավորների համակարգում զուգաբանական համընկումը կարելի է սահմանել իբրև կանոն, իսկ բացառությունը՝ շեղում այդ կանոնից («անկանոն»), և գրեթե յուրաքանչյուր զուգաբանություն սահմանելի է ըստ իդեալի, սակայն ոչ ըստ իրականի: Դասական համեմատաբանությունը (Մեյե, Աճառյան և հետագա ուսումնասիրողներ) այս հարցում նպատակ է ունեցել ամենից առաջ սահմանելու կանոններ, գտնելու համեմատության եզրեր լեզուների ցեղակցության մեկնաբանման նպատակով:

3. Զուգաբանություններ ծայնորդների համակարգում

Սրանք հնդեվրոպական լեզուների վանկի կազմում մյուս բաղադրիչ միավորների հետ գտնվում են լրացական բաշխման հարաբերության մեջ՝ հանդես գալով իբրև ծայնավոր, բաղաձայն կամ երկբարբառի («երկինջունի») բաղադրիչ: Ավանդական («դասական») համեմատաբանության մեջ դրանց տրվում են տարբեր գնահատականներ, և դրանք ներկայացվում են տարբեր կարգի տառադարձումներով:

3. 1. Հե. *₁ և *₂ ծայնորդների ենթահամակարգ

1) Հե. *_y (*₁) ծայնորդը՝ իբրև ծայնավոր, հանդիպում է հայ-կելտական հետևյալ տիպի զուգաբանություններում:

ա) Հայ. *ի* – կելտ. *i*. սա երկու կարգի է՝ կապված ծայնորդ-ծայնավորի երկար (ī) կամ կարճ (i) լինելու հետ, ըստ այդմ հնարավոր է երկու դրսևորում. 1) հայ. *ի* – կելտ. (*₁). օր.՝ *աղբար* – կելտ. *liach* (*₁oliqo-), *անիծ* – կելտ. *sned* (*₁gnid, *₁knid), *երի* – գալլ. *are* (*₁pri), *կեալ* – կելտ. *biu* (*₁g²iya), *ի* (նխ.) – կելտ. *in* (*₁in, *₁en), *ի* (*ի-ք, ի-նչ*) – կելտ. *cid* (*₁k²i), *լիրբ* (*լպիրծ, լպիրշ*) – կիմր. *llyfr* (*₁slibr), *լիք* (*լքանել, ե-լիք*) – կելտ. *lēicim* (*₁liq), *կի* – կելտ. *bi* (*₁g²iv)¹³, *հացի* (ծառը) – կելտ. *huinnius* (*₁ask¹hio), *հովի* – հիդլ. օի «ոչխար» (*₁Hoii-p^[h]aH-), *տիզ* – կելտ. *dega* (*₁dig¹h), *մի* («մեկ») – կելտ. *smail* (*₁smio), *տի* – հիդլ. *die* «օր» (*₁t¹iū-), *կեալ* – կելտ. *biu* (*₁g²iya), *նիստ* (*նստել*) – կելտ. *net* (*₁nizdo), *նքոյր* – կելտ. *nithio* (*₁nik-), *քիրտն* – կիմր. *chwys* (*₁swidro) և այլն. 2) հայ. *ի* – կելտ. (*₁ī). օր.՝ *դի* (*դի-ակ*) – հիդլ. *dia* «աստված», հիդլ. *ded-* (ներկ. *ժմ.* *ru-deda*, անց. *ժմ.* *con-ro-deda* «վերանալ, կորսվել, անհետանալ»), հիդլ. *duine* «մարդ» («մահկանացու»), կելտ. *dith* (*₁t¹ieū-, նաև *₁d^[h]eū- «կորչել, կորսվել», «մեռնել»), *դիել* – կելտ. *dimim* (*₁dhē, *₁dhī), *ցին* (թոշուն) – կելտ. *scailt* (*₁k¹yīno, *₁ksīno), *քսան* (< *₁q₁hsán) – հիդլ. *fiche* «քսան» [*₁xi-ú^[h]ṡ^[h]-(iH)-]:

13 Ստուգաբանությունը պատկանում է Պեդրեսնին:

բ) Հե. *y (*i)-ն՝ իբրև բաղաձայն, կելտական լեզուներում (գալլերեն, բրետոներեն, իռլանդերեն) բառասկզբում կամ բառամիջում՝ երկու ձայնավորի, նաև բաղաձայնի և ձայնավորի միջև, պահպանվում է, իսկ հայերենում բառասկզբում *i, *n, *r ձայնորդներից, նաև *d, *dh պայթականներից հետո, դառնում է ջ կամ սղվում, բայական վերջավորությունների դեպքում վերածվում է լծորդ ձայնավորի, *k²-ի, g²-ի հետ կապակցվելիս՝ դառնում է կամ ճ, *s-ից հետո՝ j, մեկերկու բառում բառասկզբում՝ l և այլն¹⁴: Օր՝ *երեք* – հիռլ. tri (ար. u.), téoir (իգ. u.) «երեք» (*t^hrei- «երեք»), *լիկ (լիճ)* – հիռլ. legaim (*lēgiā, *leg-) ¹⁵, *լուծ* – կիմր. iau- (*yug'o), *ձմեռն* – կելտ. gam (*g'heiem-er), *մարդ (մարդոյ)* – կիմր. merch (*mr̥t-oso), *մէջ* – կելտ. medón (*médyo), *ողջ* – կիմր. holl (*olyo), *ջին (ջնել) // ջինջ (ջնջել)* – կելտ. gonim (*g²hen, *g²hen-ye)¹⁶:

2) Հե. *w [(*)u, *u, *ū] ձայնորդի ցեղակցային դրսևորումների վերաբերյալ Աճառյանը գրում է հետևյալը (բերում ենք ամբողջությամբ). «Հնդեվրոպական նախալեզվի w ձայնորդի ձայնափոխությունների (իմա՝ հնչյունափոխությունների – Վ. Հ.) օրենքները շատ բարդ են. սրա պատճառն այն է, որ w ձայնի (իմա՝ հնչյունի – Վ. Հ.) արտաբերությունն ունի երկու կողմ. մի կողմից լեզվի մեջքը մոտենում է քիմքի վերջի մասին, մյուս կողմից՝ շրթունքները կլորանում և մոտենում են իրար: Երբ զարգանում է առաջին կողմը, այսինքն՝ լեզուն ավելի է մոտենում քիմքին, w դառնում է g^w, հետո g, այսպես է բառասկզբում հայերենի մեջ և մասամբ պարսկերենում. նույնպես և՛ բրետոնական լեզվի մեջ, ուր դառնում է gw: Երբ զարգանում է երկրորդ կողմը, այսինքն՝ շրթունքներն ավելի են մոտենում իրար, w դառնում է b, ինչպես ունենք բառասկզբում պարսկերենի մեջ՝ որոշ դեպքերում»¹⁷: Եվ այս ամենի մեջ, «երբ իռլանդերենը w ձայնի դեմ դնում է f, իսկ բրետոնականը gw, ուրեմն հին կելտական լեզուն ունեցել է w ձայնորդը»¹⁸: Ըստ այսմ՝ «հնդեվրոպական նախալեզվի w ձայնորդի իբրև բաղաձայն ներկայացրած ձևերն են ... հայերեն q, l, ... իռլանդերեն f»¹⁹:

Ըստ այս հիմունքի՝ առանձնացվում են հետևյալ զուգաբանությունները.

ա) Կարճ տարբերակ. հե. *u > հայ. ու – կելտ. u (o, ô, a, au, ou i, ū, é, e, é). օր.՝ *անձուկ* – կելտ. (cum)ang (*ang'hu), *արդասուր* – բրետ. dacroi (*drak'ru), *բուծ (այծի)* – կելտ. bocca (*bhug'o), *դու* – կելտ. tū (*tu, *tū), *դուլ «դադար»* – կելտ. dál (*dhul), *դուռն* – կելտ. dorus (*dhur), *դի (դիակ <*դուի-ակ, ու-ի սղումով)* – կելտ. diith (*dhiū), *եղուկ* –

14 Տե՛ս Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. VI, էջ 485-486:

15 Զահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 279:

16 Հմմտ. հայ. *գան* «ծեծ, նեղություն»: Զահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 149:

17 Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. VI, էջ 487: Հմմտ. Սղաբեկյան Մ. Ա., Հնդեվրոպական *É բաղաձայնը հայերենում, «Պատմա-բանասիրական հանդես», 1981, N 4, էջ 95-108: Նույնի Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր, Եր., 2017, էջ 12-34:

18 Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. VI, էջ 487:

19 Նույն տեղում:

կելլւ. lucht (*lug²), թանձր – կելլւ. técht (*tʰgˀhú)²⁰, թումբ – միռլ. tomm (*tum), լու (լուր, լսել) – կելլւ. cloor [*kˀlu(-s)], լուանալ – կելլւ. luac (*plu), լուծ – կիմր. iau (*yugˀo), լուռ – կելլւ. clunim (*kˀlus-r), խուղ (հիւղ) – կելլւ. cūll (*qul), կուլ (կլանել) – կելլւ. gelim (*gˀul), կռունկ – կիմր. garan (*gurōng), հերու – կելլւ. hurid (*peruti), հուր – կելլւ. ūr (?) (*puro), մանր (մանուկ) – կելլւ. mend (*mānu), մարդ (մարդոյ) – իռլ. fer (*wīr), մուր (մուրճ, մրուր) – միռլ. mūr (*mutro), մուրկ (մրկել) – կելլւ. múch (*smug-ro), ունկն – կելլւ. au, օ (*ōsn, usn + կն), ուր (<*ու-ր) – կիմր. cwi (*kˀu-r), պղպջակ (*պուր) – կելլւ. bolach (*bul), *պուրղ («vulva») – կելլւ. ball (*bul-skˀ), պուր (բշտիկ) – կիմր. bothell (*bud), պուր «ծիլ» – կիմր. bothell (*bud), ռունգն (?) – կելլւ. srōn (*srung), սկեսուր – կիմր. chwegr (*kˀwekˀurā), սուրբ – կելլւ. cuanna (*kˀubhrō), տրամ «պինդ» – կիմր. dūr (*dru-rā-mo), վեր (վերայ) – գալլ. ver (*uper):

բ) Երկար տարբերակ. հե. *ū > հայ. ու – կելլւ. u (w, ū). օր. կու, կոյ – կելլւ. budr (*gūto), ռոնալ (<*ռոնալ) – կելլւ. rūn (*rē), քուք «ողբ» – կիմր. cwyn (*kˀōū):

գ) Հե. *w ձայնորդի վերաբերյալ կա ևս մի ուշագրավ երևույթ, որը մասնակիորեն արտացոլված է նաև հայերենում և կելլականում. ա) հայ. գ – կելլւ. (կիմրերեն, կոռներեն, ըստ Մեյեի և Աճառյանի՝ բրետոներեն) gw (<*w <*gw). օր. գարուն – կիմր. guannum (*vesr), գեղ(եղիկ) – կիմր. gweled (*wel-), գեղձ «իղձ» – կոռն. guell (*wel-), գեղմն – կիմր. gwlan (*velm̄n), գերան – կիմր. guern (*vergnā), գիլ (գլ-որ) – կիմր. olwyn (*wēl). բ) հայ. լ, վ – կելլւ. w (?) (մեծ մասամբ՝ u). իր – կելլւ. fein (*sewe), հաւ «պապ» – կելլւ. haue (*awo), կով (սեռ. հոլ. կովու) – կելլւ. bó (*gˀov), հովիւ – կելլւ. ōi (*ovi-pā), վեց – կելլւ. sé (*kˀswekˀs), տելել – կելլւ. doe (*dewə), տիւ (տի) – կոռն. diw (*diw), քիւ – կելլւ. cūil (*skēwo°), օղ «եղանակ» – կիմր. auhel (*aw-gho), օթ «հագնել» – կելլւ. fuan (?) (*éw-ti):

դ) Հե. *w-ի դիմաց հայերենն ունի գ, իսկ կելլականը՝ w [ø, f, (i/o ?)]. օր. ազա-նիլ «հագնել» – կելլւ. fuan (?) (*éw-ti)²¹, այգի – կելլւ. (eo) (*oiwā), առազասար – կելլւ. fuan (?) (*éō, *ōvō), լոզանալ – կելլւ. lōathar (*lov), յագ (յագենալ) – կելլւ. sāith (*sāw), սագ – կիմր. cuan (*kˀawa), տարգալ – կելլւ. drochta (*d̄rwa- + լ), տորգ – կելլւ. drochta (*dorw), օզնել (օգ-ուր) – կիմր. awyr (*aww):

ե) Երկու ձայնավորների միջև՝ հե. *w – կելլւ. w [ó (<*ow ?)]. օր. կով (կովու) – կելլւ. bō (*gˀov), տիւ – կիմր. diw (*diw):

զ) Հե. *(kˀ) w > հայ. շ (?) – կելլւ. ø (?). օր. էշ – կելլւ. ech (*kˀwo), շուն – կելլւ. cú, con (*kˀwon):

20 Հմմտ. Hambarzumyan V. G., Armenian and Indo-European: Essays on Comparative Lexicology of the Armenian Language (Comparative-typological Variativity), Yer., 2014, էջ 117-120:
 21 Հմմտ. օթ «հագնել» – կելլւ. fuan (?) (*éw-ti) (տե՛ս նույն տեղում, էջ 80):

է) Հե. *(d)w > հայ. *րկ* – կելտ. (d)aw (-o/ōe). օր.՝ *երկայն* (*երկար*) – կելտ. doel (*dwa), *երկնչել* (*երկիր*) – կելտ. dōel (*dwi), *երկու* – կելտ. dāu (*dwō)²²:

ը) Հե. *(st)w > հայ. (*ստգ) *սկ(ո)* – կելտ. sco. *սկր* (*սկրր*), *սկեր* – կիմր. ascom (*ostw-er):

թ) Այլապլ բնույթի համապատասխանություններ, որոնք ենթադրում են ավելի մանրամասն (մասնավոր) քննություն. օր.՝ *երկան* – կիմր. breuan (*g²rāwanā), *ինն* – կելտ. nōi (*énw̃), *նոր* – կելտ. nūe (*novro), *չորք* (*չորեքասան*) – կելտ. cethir (*k²etwor-es), տոկալ – կելտ. doe (*dowə-ko), *քիրտն* – կիմր. chwys (*swidro), *քյր* – կելտ. sius (*swésōr), *քուն* – կելտ. súan (*swopno):

3. 2. Հե. *r (r, r̄) և *l (*l, *l̄) ձայնորդների ենթահամակարգ

1) Հե. *r (r, r̄) ձայնորդի հայ-կելտական զուգաբանությունների տարատեսակները համեմատաբար քիչ են, թեև ընդգրկմամբ ավելին են (ուստի կբավարարվենք տեսակների մեջ ոչ բոլոր օրինակների մատնանշումով): Սովորաբար արձանագրվում է հե. *r > հայ. *ր* – կելտ. *r* հարաբերակցությունը, ընդ որում, իբրև կարճ ձայնավոր, ստացվում է հայ. *ար* – կելտ. *ri* զուգակցությունը, իսկ իբրև երկար ձայնավոր՝ հայ. *ար* – կելտ. *ara* (rā). հմմտ. *մայր* – կելտ. máthir (*māter), այլև *սիրտ* – կելտ. cride (*k²r̄d-):

ա) Հե. *r (կարճ) կամ r̄ (երկար) > հայ. *ար* – կելտ. (a, o, e, ei, i)r. օր.՝ *արբենալ* – կելտ. srub (*sr̄bh), *արջ* – կելտ. art (*rkthos), *բարձ* (*բարձր*, *բերձ*) – կիմր. bry (*bhr̄g²h), *կարթ* – կելտ. gerbach (*g²r̄bti), *կարծր* – կելտ. garg (*g²r̄g²), *հար* (*հարկանել*) – կելտ. orgaim (*pr̄, *pr̄g²), *հարց* – կելտ. arc (*pr̄k²-sk²), *սար* «լեռ» – բրետ. kern (*k²r̄), *սպանալ* – կելտ. seir (*spr̄), *տարգալ* – կելտ. drochta (*dr̄wa- + l), *քարք* – կելտ. cerb [(s)kr̄p] և այլն:

բ) Հե. *r (բաղաձայն) > հայ. *ր* (-ú > *ն*) – կելտ. *r*. օր.՝ *արգանդ* (*արգահարի*) – կիմր. arffed (*arq²), *այրել* – կելտ. āith (*ātēr), *արգել* – կելտ. aircthe (*arq²), *արծաթ* – կելտ. argat (*arg²-ato), *արտաստիք* – բրետ. dacron (*drak²ru), *արօր* (*արար*) – կելտ. arathar (*aratrum), *բերան* – կելտ. benn (*bher-ano), *բերել* – կելտ. berim (*bher), *բիր* (*բահ*, *բարհ*) – կելտ. bern (*bher), *բորբ(ոք)* – կիմր. berwi (*bho-bhr-o), *բորենի* – կոնն. bofer (*bhorō), *դունն* – կելտ. dorus (*dhur), *դուրզն* – կելտ. droch (*dhr̄ogh), *երբայր* – կելտ. bráthir (*bhr̄ȳtēr), *երկան* – կիմր. breuan (*g²rāwanā), *ծիծառն* – կելտ. gairm (*g²ār), *կեր* (*կերակուր*) – կիմր. breuad (*g²er), *կորկուր* (?) – կելտ. gro (*g²o-g²rod), *տեսանել* – կելտ. derc (*derk²), *տոռն* – կելտ. drochta (*doru), *տրտում* – կելտ. dord (*drom) և այլն:

22 Ստուգաբանությունը (*dw > *րկ*), որքան էլ ընդունված է, հավաստի չէ, ուստի կարելի է վերանայել: Տե՛ս Համբարձումյան Վ. Պ., Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Եր., 2012, էջ 102: Hambarzumyan V. G., նշվ. աշխ., էջ 112-114:

2) Հե. *l (*լ, *լ̥) ձայնորդի հայ-կելտական զուգաբանությունների տարատեսակները ևս, ինչպես նախորդինը, համեմատաբար քիչ են, թեև այս դեպքում նույնպես ընդգրկմամբ ավելին են (բերում ենք ոչ բոլոր օրինակները): Սովորաբար արձանագրվում է իբրև ձայնավոր. հե. *l > հայ. աղ (օր.՝ աղալ) – իռլ. li (*al), լի (լնուլ) – կելտ. līnaim, իռլ. lān (*plē-yo):

ա) Հե. *l > հայ. աղ / ալ – կելտ. (i, el), la. օր.՝ առասպաղ – կելտ. taile (*stel). ապաղծ – կելտ. del (*dl̥), աքաղաղ – կելտ. cailech (*kl̥-), գալար – կելտ. fillim (*vl̥), գաղել – կելտ. fell (*v̥l̥), գաղծն – կելտ. fillim (*v̥l̥), գաղտ(նի) – կելտ. (fell) (*v̥l̥), դալար (դալուկն) – կելտ. deil (*dh̥l̥), դաղծն – միռլ. deil (*dh̥l̥), հաղ (հեղ) – կելտ. eb̥la (*pl̥, *pel), մալել – կելտ. melim (*ml̥), մապաղ (մապաղաղ) – կելտ. meldach (*ml̥d-), պալար – կելտ. bolach (*b̥l̥- + աթ), քաղել – կիմր. chwalu (*ql̥):

բ) Հե. l > հայ. լ, մասամբ՝ ղ (բառակզբում) – կելտ. l(a/á, u, e, ó). օր.՝ աղանծ – կելտ. lann (*l̥ndh), եղուկ – կելտ. lucht (*l̥ig²), լիք (լքանել) – կելտ. láicim (*l̥iq), լկիլ – կելտ. legaim (*l̥ēg), լոգանալ – կելտ. lōathar (*l̥ov), լոյծ (լուծանել) – կելտ. lun (*leug¹, loug²), լոյս – կելտ. lóche (*l̥ouk¹o), լոյտ (լուտալ) – կելտ. lāidhim (*l̥oud), լոյց (լուցանել) – կելտ. luach-te (*l̥ouk¹s), լորց – գաել. loirc (*lord-sk¹o), ողորկ – կելտ. lorg (*lorg²), ողորք – կելտ. tluch (*l̥ok²), պորկել (պլրկել) – կելտ. lom̥ (*lob):

գ) Հե. l > հայ. լ կամ ղ (ձայնավորների միջև, բառավերջում՝ ձայնավորից հետո) – կելտ. (a/á, ai, ol, e/ei)l, la, [ø (?)]. օր.՝ բալ «մշուշ» – կելտ. ball (*bh̥al, *bhal), բլոր – կիմր. bal (*bh̥ol), բողոր – կելտ. bolach (*bh̥ol- + որ), բող (բողկ, բողիկ) – կելտ. blath (*bh̥ol), դալ (դալլ) «կաթնախեծ» – կելտ. del (*dh̥oi-l), դեղ (դեղբ, դեղին, դեղծ) – միռլ. deil (*dh̥el), դուլ «դադար» – կելտ. dál (*dh̥ul), էլանել – գալլ. el (*el), կեղ – կելտ. balt (*g²el), փող (փողոթ) – բրետ. staot (*stol), ցելուլ (ցեղ) – կելտ. scailt (*sk¹el) և այլն:

3. 3. Հե *m (*մ, *մ̥) և *n (*ն, *ն̥) ձայնորդների ենթահամակարգ

1) Հե. *m (*մ, *մ̥) ձայնորդի հայ-կելտական զուգաբանությունները բազմազան են և՛ տեսակով, և՛ քանակապես: Ընդհանուր առմամբ դրա դիմաց հայերենում առկա է *ամ* (բացի մեկ-երկու դեպքից. հմմտ. *dom > փուն), իսկ կելտականում m, ama կամ mā: Այս ընդհանուր կանոնից կան շեղումներ, որոնք մասնակի բնույթի են:

Այդպիսին են ամենից առաջ հետևյալները:

ա) Հե. *մ-ի դիմաց (բառամիջում) հայերենում առկա է *մ*, կելտականում ևս՝ m. օր.՝ ամէն (ամենայն) – semain (*sm̥mo), ամսպ – կելտ. nem (*mbhq), ամպրոպ – կելտ. imrim (*mbhrq), իսկ բառավերջում հայերենում ն, կելտականում ø (զրո). ելթն – կելտ. secht (*septm), փասն – կելտ. deich (*d̥kám):

բ) Հե. *m (բաղաձայն՝ բառասկզբում) > հայ. *մ* – կելտ. m. օր.՝ *ամիս* – կելտ. mis (*mēns), *մալել* (*մլմլել*) – կելտ. melim (*m̥l̥), *մաճնուլ* – բրետ. meza (*mag´), *մայր* – կելտ. máthir (*māter), *մայրի* (ծառ) – գալլ. materis (*māter), *մանր* (*մանուկ) – կելտ. menb (*mənũ), *մապահ* (*մապողաշ*) – կելտ. meldach (*m̥l̥d-), *մեժ* – կելտ. maige (*meg´a), *մեղկ* (*մեղմ*) – կելտ. meldach (*mel), *մեղր* (սեռ. հոլ.՝ *մեղու*) – կիմր. mel (*mel), *մեղք* (*մեղանչել*) – կելտ. meil (*mel), *մեռանիլ* – կելտ. marb (*mer), *մէջ* – կելտ. medón (*médyo), *միս* – կելտ. mīr (*mēmso), *միտք* – կելտ. mediur (*mēd), *մլ-աղաց* (*մամուլ*) – կելտ. melim (*mōl), *մուր* (*մուրճ*, *մրուր*, *մրրիկ*) – միռլ. mūr (*mutro):

գ) Հե. *m (բաղաձայն՝ բառամիջում և բառավերջում) > հայ. *մ* – կելտ. m. օր.՝ *ամ* (*ամիկ*) – կելտ. sam (*sama, *s^omā), *անուն* – կելտ. ainm (*nōm̥), *ամբ-ողջ* – կելտ. (imb) (*ambhó), *ալրամն* – կելտ. dēt (*d̥n̥-mn), *գեղմն* – կիմր. gwian (*velm̥), *եկ* (*եկն*) – միռլ. beim (*g²ā, g²em), *եմ* – կելտ. am (*ésmi), *երեսուն* – կելտ. tricha (*trik´omtə), *թումբ* – միռլ. tomm (*tum), *հողմ* – կելտ. animm (*onəmo), *հում* – կելտ. om (*ōmo), *ձմեռն* – կելտ. gam (*g²heiem-er), *ողորմ* – կելտ. arman (*orm), *ջերմ* – կելտ. gor (*g²hermo):

դ) Հե. *sm (բառասկզբում) > հայ. *մ* – կելտ. sm, m. օր.՝ *մի* [*մէն*, *միայն*, *միմեանք*, *միս* (**մես*)] – կելտ. smail (*smio), *մուխ* «ծուխ» (*մխել*) – կելտ. múch (*smuqh), *մուրկ* (*մրկել*) – կելտ. múch (*smug´-ro), *մորուք* (**մարուք*) – կելտ. smeck (*smakru):

ե) Հե. *sm (բառամիջում) > հայ. *մ* – կելտ. am. օր.՝ *եմ* – կելտ. am (*ésmi):

2) Հե. *n (*n̥, *n̥) ձայնորդի հայ-կելտական զուգաբանական արտացոլումները, ինչպես մասամբ մյուսների դեպքում, նախկինում (Մելե, Աճառյան և ուրիշներ) ներկայացված են եղել ընդհանուր գծերով, այնինչ Աճառյանի ցանկերի տվյալների մանրամասն համեմատությունից պարզվում է, որ հայերենին զուգահեռ կելտական լեզուների օրինակները հանդես են բերում այդ ձայնորդի տարբերակների՝ որևէ ձայնավորի հետ կապակցման, այսպես կոչված, ցեղակցային-տիպաբանական մասնակիություններ:

Նշենք դրանցից հետևյալները:

ա) Հե. *n̥ > հայ. *ան* – կելտ. (i, a, o, u, ai)n, (e, ē)n, im, ø. օր.՝ *ան*- (ժխտ. մասնիկ) – հիռլ. ingnad (*n̥), *աղանձ* – կելտ. lann (*l̥ndh), *անուն* – կելտ. ainm (*nōm̥), *ասեղն* – բրետ. ebil (*ak´l̥n̥), *ալրամն* (**ալրամն*) – կելտ. dēt (*d̥n̥-mn), *գեղմն* – կիմր. gwian (*velm̥), *գերան* – կոռն. guern (*ver̥nā), *թանձր* – կելտ. técht (*t̥ng´hú), *ինն* – կելտ. nōi (*énw̥), *խանդ* (**խանձ*, *խազ*) – բրետ. condud (*k̥h̥nd), *ծան* [*ծանեալ*, *ծանօթ* (**ծանալթ*), *ճանաչել*] – կելտ. gninim (*g´n̥), *հասանել* – կելտ. do-icim (*n̥kē), *պապանձիլ* – կելտ. bunne [*b̥ndh-(bh)], *սան* – կելտ. sine (*ps̥n̥), *քան* – կելտ. fiche (*w̥ik´n̥ti), *օձանել* – կելտ. imb (*ng²):

բ) Հե. *n (բաղաձայն՝ բառասկզբում) > հայ. ն – կելտ. in, n(ո, a, e, i). օր.՝ *եղունգն* – կելտ. ingen (*noghlo), *մերկ* (<*ներկ) – կելտ. nocht (*neg²-ro), *նաւ* – կելտ. nau (*nāu), *նիստ* – կելտ. net (*nizdo), *նրոյր* – կելտ. nithio (*nik-):

գ) Հե. *n (բաղաձայն՝ բառամիջում և բառավերջում) > հայ. ն – կելտ. (a, o, e, i, y)n, (ā, ē, ai, ei)n, ām, ne, ø: Կան զգալի թվով զուգահեռներ. օր.՝ *անիծ* – կելտ. sned (*gnid- / *knid), *անծուկ* – կելտ. (cum)ung (*ang¹hu), *ան* «ունեցվածք» – կելտ. āne (*opnos), *գան* (*գանել*) – կելտ. gonim (*g²həni), *գուն* «ջանք» – կելտ. fine (*wōn, wōn), *դոն* – կելտ. indile (*dhon), *եղն(իկ)* – կիմր. elain (*éino), *ընթանալ* – կիմր. hynt (*senth), *թան* [*թանալ*, *թանչ*, *թաց*, *թոն* (*թան)] – կելտ. *tām (*tā, *tān), *ի* (նխ.) – կելտ. in (*in / *en), *լայն* – կելտ. lethan (*plātno), *ծին* (*ծնանիլ*, *ծներել*) – կելտ. gein (*g¹en), *կին* – կելտ. ben (*g²en), *կրունկ* – կիմր. garan (*gurōng), *հին* – կիմր. hēn (*seno), *հուն* – կելտ. ēs (*pont), *ուն* – կելտ. cú, con (*k¹wōn), *հողմ* – կելտ. animm (*onəmo), *մանր* (*մանուկ*) – կելտ. menb (*mənu), *նայ* «թաց, խոնավ» – կելտ. snuadh (*snə-t), *ողն* (սեռ. հոլ.՝ *ողն*) – կիմր. elin (*olen), *ոլն* «վիզ» – կիմր. elin (*olen), *ունկն* – կելտ. au, ō (*ōsn, usn + կն), *ջինջ* (*ջնջել*) – կելտ. gonim (*g²hen-ye), *ռունգն* – կելտ. srōn (*srung), *սպիտակ* – կելտ. sine (*pstēn), *սուն* [*սնանիլ* (*սին*, *սուն*)] – կելտ. sine (*psen, *pson, *psn), *քուն* (*քունք*) – կելտ. súan (*swopno), *օձ* (*աւձ) – կելտ. ung (*ang²hi) և այլն:

4. Զուգաբանություններ երկբարբառների («երկհնչյունների») համակարգում

Նման միավորների զուգաբանական արտացոլումներն առավելապես լեզուների ներքին զարգացման հիմունքներով են պայմանավորված, ուստի զուգաբանական քննության տվյալները թերևս չունեն այն ինտենսիվությունը, որը նկատելի է ձայնավորների և (եռաբաշխ՝ տրիֆունկցիոնալ) ձայնորդների առանձնակի (ինքնակա) արտացոլումների դեպքում:

Այնուամենայնիվ նկատում ենք հետևյալը (ըստ ձայնավորի միավորման):

1) Հե. *e (i, u, r, l, m, n) > հայ. ի (*է [ʔեյ]), ոյ, եւ, եղ, ին, ին – կելտ. ē (īa), ō (ūa), er, el, (em), (en), ընդ որում՝ հետևյալ ենթախմբավորմամբ.

ա) հե. *ei > հայ. ի (*է [ʔեյ]) – կելտ. e, i, ōi. օր.՝ *դէզ* – կելտ. dign (*dheig^oh), *գէտ* (*գիտեմ*) – կելտ. ro-fetar- (*weid), *գիւտ* (*գիտանել*) – կելտ. finnaim (*weid, woid), *լէզ* (*լիզեմ*) – կելտ. ligim (*leig^oh), *սէր* (*սիրել*) – կելտ. cōim (*k^oei-ro)²³.

բ) հե. *eu > հայ. ոյ – կելտ. e, u (w), ui (ūi). օր.՝ *բոյս* (*բուսանել*) – կելտ. buith (*bhu, *bheu), *լոյծ* (*լուծանել*) – կելտ. lun (*leug, *loug^o), *խոյլ* «ուռուցք» – իռլ. cūil (*kheul), *մոյթ* – կելտ. methos (*meuthi), *փոյթ* (*փութալ*) – կիմր. ffwdan (*speut).

²³ Թերևս բացառություն է հե. *ei > հայ. եւ – կելտ. iw զուգահեռը՝ *տիւ* – կելտ. diw (*diw), որ բացատրելի է նախագրային ժամանակաշրջանում (հմմտ. *տեւեմ* և այլն):

զ) հե. *eu > հայ. եւ (իւ) (բաց վանկում)– կելտ. eu, ēi, u, oe (?). օր.՝ *untioð* (*առիւծ*) – կելտ. rucht (*reugʷ), *դեդեիլ* – միոլ. dumacha (*dheu), *իւր* – կելտ. fēin (*sewe), *դեւել* – կելտ. doe (*dewə).

դ) Հե. *eu > հայ. աւ – կելտ. au, ua (?). օր.՝ *օդ* (*աւդ «կոշիկ») – կելտ. fuan (?), *օր* [*աւր «հագն(վ)ել»] – կիմր. aethel (*ew-ti):

Իսկ մյուս՝ *եւ*, *եդ*, *ին*, *ին* միավորները հին գրական հայերենում, գիտենք, չունեն երկինջունային արժեք: Թերևս հավանական է, որ այդպիսին չէին նաև նախագրային հայերենում, որ հատուկ քննության նյութ է²⁴:

2) Հե. *o (i, u, r, l, m, n) > հայ. է, ոյ, որ, ող, ում, ուն – կելտ. oe, ð(ūa), or, ol, (om), (on), սակայն եղած օրինակներն այլ պատկեր են ներկայացնում.

ա) հե. *ou > հայ. ոյ – կելտ. ó, āi, ua, ou և այլն. հմմտ. *լոյս* – կելտ. lóche (*luokʷo), *լոյր* (*լուրալ*) «անարգանք, թշնամանք» – կելտ. lāidhim (*loud), *լոյց* (*լուցանել*) – կելտ. luach-te (*loukʷs), *լուսան* – կելտ. lug (*loukʷ), *ոյծ* (*ուծանալ* «սառչել») – կելտ. ðcht (*ouɡʷ).

բ) հե. *ou > հայ. այ (բառասկզբում), է (բառամիջում շեշտված), ի (անշեշտ) – կելտ. oi, eo և այլն: Հմմտ. *այր* (*այրնույ*) «ուռչել, այտուցվել» – կելտ. óil (*oid), *այգի* – կելտ. (eo) (*oiwā) և այլն:

Մյուս՝ *որ*, *ող*, *ում*, *ուն* միացությունները գրական հայերենում երկինջունային չեն. գուցե այդպիսին եղել են նախագրային շրջանում:

3) Հե. *a (i, u, r, l, m, n) > հայ. այ, աւ, ար, աղ, ամ, ան – կելտ. ae, ð (ūa), ar, al, am, an: Այս դեպքում ևս եղած օրինակներն այլ պատկեր են ներկայացնում.

ա) հե. *ai > հայ. այ – կելտ. a, ai, ae. օր.՝ *այծ* – կելտ. ag (*aigʷ), *այլ* – կելտ. aile (*ailo), *գայլ* – կելտ. fael (*vailo).

բ) հե. *au > հայ. աս (օ) – կելտ. u, aw. օր.՝ *յօդ* – կելտ. fuan (?) (*au-dh), *օգնել* (*օգուր*) – կիմր. awyr (*auw) և այլն: Մյուս՝ *ար*, *աղ*, *ամ*, *ան* միավորները հին գրականում ունենին ոչ երկինջունի գործառույթ:

Եզրակացություններ

Թեմայի ուսումնասիրությունից եզրակացնում ենք հետևյալը.

1. Հայերենի և կելտական լեզուների հնչյունական (ծայնավորական, ձայնորդային և «երկինջունային» մակարդակի) զուգաբանություններն ունեն ոչ միայն ընդհանուր օրինաչափությունների, այլև կոնկրետ առանձնահատկությունների բնույթ:

2. Այդ առանձնահատկություններին անդրադառնալը կարևոր է ամենից առաջ ցեղակից լեզուների ընդհանուր պատմության համար, մյուս կողմից՝ հայերենի և կելտական լեզուների առնչության պարզաբանման տեսանկյունից:

²⁴ Այդ հարցին անդրադառնում ենք մեր մեկ այլ (ծեռագիր) աշխատանքում:

3. Հնչյունական մանրամասն քննությունը ուրվագծում է ավելի իրական պատկեր լեզվական ցեղակցության վերաբերյալ՝ անկախ հնչյունների՝ ինքնուրույն զարգացման ընթացքում ունեցած տարբերություններից:

4. Ձայնավորական համակարգում պարզ («կարճ») ձայնավորների զուգաբանություններն ունեն ավելի մեծ ընդգրկում, քան բաղադրյալ («երկար») ձայնավորներինը:

5. Ձայնորդների լայն գործածությունը բացատրվում է դրանց գործառական յուրահատկություններով, ինչպես նաև արմատի կազմության մեջ ունեցած մասնակցության տարբերությամբ:

6. Երկհնչյունների ենթահամակարգում զուգաբանություններն ավելի քիչ են:

Վազգեն Գ. Համբարձումյան - հեղինակ է երկուսուկես տասնյակից ավելի գրքերի (մենագրություն, դասագիրք, ժողովածու, մեթոդական ձեռնարկ, թարգմանություն), երկու հարյուրից ավելի հրապարակումների (գիտական հոդված, զեկուցման դրույթներ, գրախոսություններ), զբաղվում է ընդհանուր և համեմատական լեզվաբանության, տիպաբանության, հայոց լեզվի պատմության, քերականական կառուցվածքի և հնչյունաբանության, հայ բարբառագիտության, գեղարվեստական խոսքի և լեզվաոճաբանության հարցերով, կատարում է գրաբար բնագրերի նոր գրական հայերեն թարգմանություն:

Էլեկտրոնային հասցե՝ hambardzumyanvazgen01@asp.am

Համառոտագրություններ

- | | |
|-----------------------------|--|
| անգլ. – անգլերեն | հիռլ. – հին իռլանդերեն |
| անց. կտր. – անցյալ կատարյալ | հկոռն. – հին կոռներեն |
| ար. ս. – արական սեռ | միռլ. – միջին իռլանդերեն |
| բրետ. – բրետոներեն | ներկ. Ժմ. – ներկա ժամանակ |
| գաել. – գաելերեն | նխ. – նախդիր |
| գալլ. – գալլերեն | սեռ. հ. – սեռական հոլով |
| դ. – դեմք | վալլ. – վալլերեն |
| իգ. ս. – իգական սեռ | օր. – օրինակ |
| իռլ. – իռլանդերեն | Pok. – J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I-II, Bern-München, 1959. |
| կելտ. – կելտերեն (կելտական) | |
| կիմր. – կիմրերեն | |
| հայ. – հայերեն | |
| հե. – հնդեվրոպական | |

Summary

THE PHONETIC ISOGLOSS OF ARMENIAN AND CELTIC LANGUAGES

(Levels of vowels, sonorants and “diphthongs”)

Vazgen. G. Hambarzumyan

Key words - Armenian language, Celtic languages, study isoglosses, phonetic isoglosses, isoglosses of vowels, sonorant phonemes and diphthongs, general and special in isoglosses.

The Armenian and the Celtic languages present not only generalizations of phonetic (vowel, sonorant, and “diphthong”) isoglosses but also differences that so far have not been the subject of a separate study; our work is such an experience. These isoglosses are systemic and subsystemic in nature.

In this article, we bring together the Armenian-Celtic phonetic parallels, mostly based on the material so far accumulated, but also make partial adjustments and additions.

In traditional comparisons, their obvious patterns have been the focus of much attention. Our study reveals that there are a significant number of common rules (parallels) besides the traditionally cited, with exceptions and deviations from these rules that are, in their turn, definable, simply illustrative and justified by the full characterization of the phenomenon. This article has given some attention to this aspect of the problem.

The facts show that the subsystem of simple (“short”) vowels is not only broader in the given vowel but also substantially more substantive than the subsystem of compound (“long”) vowels, and it is well known that is justified in communication.

The subsystem of sonorants is characterized not only by the quantitative (“formal”) but also by the functional variety, which is generally a feature of the major part of Indo-European languages (three-way sonorant usage). In the Armenian-Celtic phonetic relation, the subsystem of diphthongs has little quantitative and functional expression.

The article is notable for its detailed analysis of the facts.

A detailed examination of the historical (and not just the phonetic) overlap between the Armenian and other Indo-European languages seems to us to be quite appropriate in terms of the totality of linguistic and social perceptions of individual societies.

ФОНЕТИЧЕСКИЕ ИЗОГЛОССЫ АРМЯНСКОГО И КЕЛЬТСКИХ ЯЗЫКОВ

(Уровни гласных, сонорантов и «дифтонгов»)

Вазген Г. Амбарцумян

Ключевые слова - армянский язык, кельтские языки, изучение изоглосс, фонетические изоглоссы, изоглоссы гласных, сонорных фонем и дифтонгов, общее и особенное в изоглоссах.

Армянский и кельтские языки представляют не только обобщения фонетических (гласных, сонорантов и «дифтонгов») изоглосс, но и различия, которые до сих пор не были предметом отдельного исследования: наша работа - такой опыт. Эти изоглоссы носят системный и подсистемный характер.

В этой статье мы объединяем армяно-кельтские фонетические параллели, основанные главным образом на накопленном материале, а также вносим частичные корректировки и дополнения.

Традиционные (классические) сравнения были сосредоточены на их очевидных закономерностях. Наше исследование показывает, что существует значительное количество общих правил (параллелей), помимо традиционно упоминаемых, с исключениями и отклонениями от этих правил, которые, в свою очередь, являются определяемыми, просто иллюстративными и оправданными полной характеристикой явления. В данной статье уделено некоторое внимание этому аспекту проблемы.

Факты показывают, что подсистема простых («кратких») гласных шире с точки зрения не только данного гласного, но также и значительно большего количестве примеров (фактов), чем составная («долгая») подсистема, и она хорошо известна, оправдана в общении.

Подсистема сонорантов характеризуется не только количественным («формальным»), но и функциональным разнообразием, что, как правило, характерно для большей части индоевропейских языков (использование трехстороннего сонора). В армяно-кельтском фонетическом соотношении подсистема дифтонгов количественно и функционально мало выражена.

Статья отличается подробным анализом фактов.

Детальный анализ исторического (а не только фонетического) совпадения между армянским и другими индоевропейскими языками представляется нам

вполне подходящим с точки зрения совокупности языкового и социального восприятия отдельных обществ.

REFERENCES

1. A Concise comparative Celtic Grammar by H. Lewis and H. Pedersen, Göttingen, 1937 (= **L'juis G. i Pedersen X.**, Kratkaja sravnitel'naja grammatika kel'tskix jazykom, M., 1954 **(In Russian)**).
2. **Acharcan H.**, Hayeren armatakan bařaran, hat. 1-4, Yer., 1971-1979 **(In Armenian)**.
3. **Acharyan H.**, Hayots' lezvi patmut'yun, I mas, Yer., 1940 **(In Armenian)**.
4. **Acharyan H.**, Liakatar k'erakanut'yun hayots' lezvi, hat. VI, Yer., 1971 **(In Armenian)**.
5. **Aghabekyan M. A.**, Hayereni hamematakan usumnasirut'yan harts'er, Yer., 2017 **(In Armenian)**.
6. **Aghabekyan M. A.**, Hndyevropakan *Ĕ baghadzaynē hayerenum, «Patma-banasirakan handes», 1981, N 4 **(In Armenian)**.
7. **Hambardzumyan V. G.**, Hayereni bařak'nnakan yev stugabanakan usumnasirut'yunner, Yer., 2012 **(In Armenian)**.
8. **Jahukyan G. B.**, Hayereni stugabanakan bařaran, Yer., 2010 **(In Armenian)**.
9. **Jahukyan G. B.**, Hayots' lezvi patmut'yun, Yer., 1987 **(In Armenian)**.
10. **Meje A.**, Vvedenije v sravnitel'noje izuchenije indojeuropejskix jazykov, M.-L., 1933 **(In Russian)**.